**Արձանագրություն N 2-1**
**ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով «Երկաթուղային կամուրջների շահագործման կանոններ» ՀՀ կանոնների հավաքածուի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 14.07.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բոյաջյան
Գ. Ծատուրյան
Ա. Չավուշյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ս. Թորոսյան

**1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին**

(Ա. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի հուլիսի 14-ին ժամը 11:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե, կապի միջոց, էլեկտրոնային փոստի հասցե | Նախահաշվային գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը | info@nuaca.am, gnumner.nuaca@gmail.com ք. Երևան, Տերյան 105 010-303-300 /838/, 099-55-67-41 | 5 000 000 | 3 950 000 | 790 000 | 4 740 000 |

1.2 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

## 2. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին

--------------------------------------------------------------------------------------------

(Ա. Գևորգյան)

2.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտով ներկայացված դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված Հավելված N 1-ի ձևաչափին:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել **«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.07.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը**: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացնելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-26/1 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender1@minurban.am էլ. փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ -0

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

--------------------------------------------------------------------------------------------

(Ա. Գևորգյան)

3.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 16.07.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ -0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Գևորգյան

Անդամ՝ ---------------------------------------- Ա. Բոյաջյան

---------------------------------------- Գ. Ծատուրյան

---------------------------------------- Ա. Զավուշյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ն. Հարությունյան